Էջ 3

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N 11/ 101 -2017**

ք. Երևան <<22>> 05 2017 թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Կարկոմավտո» ՍՊԸ** -ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Շախմուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Ավտոմեքենաների պահպանման>> ծառայությունների մատուցման ապահովման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **8 000 000** ( **ութ միլիոն**) **ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017 թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է <u>4</u> էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն hավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**
**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի**
**գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**

**Տնօրենի տեղակալ**

**Ա. Հակոբյան**

______________________
(ստորագրություն)

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«Կարկոմավտո» ՍՊԸ**
**Ք. Երևան, կոմիտասի 47**
**«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**

**Հ/հ 217001-094077-001**
**ՀՎՀՀ 00059627**

**Գլխավոր տնօրեն**

**Ա. Շախմուրադյան**

(ստորագրություն)

Հավելված 1
<<22>> 05 2017թ. կնքված
N 11/162-2017 ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | | |
|---|---|---|
| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր | | |
| Շևրոլե-Նիվա և ՈՒԱԶ-Պատրիոտ հետախուզական մեքենաների վերանորոգում և ավտոպահեստամասերի տեղադրում, այդ թվում՝ 50111170/1/1/1 Համաձայն 25.04.2016թ ի կնքված N 11/93-2016, ԱՊՁԲ-11/102գ-2016 պայմանագրերի | | |
| h/h | Ավտոպահեստամասերի անվանումը | Միավորի գինը ՀՀ դրամով |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 3750 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 1250 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 1250 |
| 4 | Արտածման համակարգի ստուգում | 1250 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 1250 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | 1250 |
| 7 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | 1900 |
| 8 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | 2500 |
| 9 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 3750 |
| 10 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 3750 |
| 11 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 2500 |
| 12 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3750 |
| 13 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 2500 |
| 14 | Թափքի վիճակի ստուգում | 2500 |
| 15 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 1250 |
| | **ՏՍ-2 ներառվող ծառայությունների անվանում** | |
| 16 | Շարժիչի հանում և տեղադրում | 25000 |
| 17 | Շարժիչի վերանորոգում | 62500 |
| 18 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 2500 |
| 19 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 6250 |
| 20 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 18750 |
| 21 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 56250 |
| 22 | Փականի խցուկի փոխարինում | 15000 |

| | | |
|---|---|---|
| 23 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 10000 |
| 24 | Հրիչների փոխարինում SOHC | 10000 |
| 25 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 7500 |
| 26 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 25000 |
| 27 | Մխոցային օղակների փոխարինում | 62500 |
| 28 | Թափանիվի հանում և տեղադրում | 23750 |
| | *Ղեկավարման, սնման և յուղման համակարգ* | |
| 29 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1250 |
| 30 | Յուղի պոմպի փոխարինում | 18750 |
| 31 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 18750 |
| 32 | Օդի զտիչի փոխարինում | 1900 |
| 33 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 11250 |
| 34 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 18750 |
| 35 | Բենզամղիչի փոխարինում | 6250 |
| 36 | Վառելիքի զտիչի փոխարինում | 1900 |
| 37 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | 12500 |
| | *Սառեցման և արտածման համակարգ* | |
| 38 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 3750 |
| 39 | Հովհարի հանում և տեղադրում | 6250 |
| 40 | Ռադիատորի հանում և տեղադրում | 12500 |
| 41 | Ռադիատորի վերանորոգում | 12500 |
| 42 | Թերմոստատի փոխարինում | 3750 |
| 43 | Ջրի պոմպի փոխարինում | 7500 |
| 44 | Ընդարձակող բաքի փոխարինում | 1250 |
| 45 | Խլարարի հանում և տեղադրում | 3750 |
| 46 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2500 |
| | *Կցորդում, ՓՏ և ԱՓՏ* | |
| 47 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | 3150 |
| 48 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 18750 |
| 49 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 18750 |
| 50 | ՓՏ-ի վերանորոգում | 12500 |
| 51 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 12500 |
| 52 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 12500 |
| | *Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ* | |
| 53 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | 7500 |
| 54 | Բաշխիչ տուփի վերանորոգում | 12500 |
| 55 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | 3150 |
| 56 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | 2500 |
| 57 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,վերանորոգումով | 4400 |
| 58 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | 2500 |

| | | |
|---|---|---|
| | *Առջևի և հետևի կամրջակներ* | |
| 59 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | 18750 |
| 60 | Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում | 12500 |
| 61 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | 3150 |
| 62 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 650 |
| | *Կախոց* | |
| 63 | Տրավերսի հանում և տեղադրում | 25000 |
| 64 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում | 7500 |
| 65 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 4375 |
| 66 | Անվակունդի հանում և տեղադրում | 2500 |
| 67 | Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում | 7500 |
| 68 | Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 8750 |
| 69 | Զսպանակի հանում և տեղադրում | 3750 |
| 70 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 1250 |
| 71 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 5000 |
| 72 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 1250 |
| 73 | Առջևի աջ կամ ձախ ծգանների հանում և տեղադրում | 1900 |
| 74 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 2500 |
| 75 | Ծոճանակային լծակի հանում և տեղադրում | 1900 |
| 76 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 2500 |
| 77 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 1250 |
| 78 | Գնդե հողակապերի փոխարինում | 1250 |
| 79 | Ծայրակաների հանում և տեղադրում | 1900 |
| 80 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 3150 |
| 81 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 1900 |
| 82 | Հետևի զսպանակի փոխարինում | 1900 |
| 83 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 1250 |
| 84 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 1250 |
| 85 | Անվաբացքի կարգավորում | 10000 |
| | *Ղեկային մեխանիզմ* | |
| 86 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 12500 |
| 87 | Ղեկային կալունի վերանորոգում | 18750 |
| | *Արգելակային համակարգ* | |
| 88 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | 4400 |
| 89 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 12500 |
| 90 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 3150 |
| 91 | Արգելակային համակարգի օդահանում | 1900 |
| 92 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 2500 |
| 93 | Արգելակային փողակի փոխարինում | 1900 |
| 94 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 1900 |

| | | |
|---|---|---|
| 95 | Հետևի կոճղակների փոխարինում | 3750 |
| 96 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 2500 |
| 97 | Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում տեղադրում | 1250 |
| 98 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 6250 |
| 99 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 5000 |
| | *Էլեկտրասարքավորում* | |
| 100 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 12500 |
| 101 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 6250 |
| 102 | Գեներատորի հանում և տեղադրում | 3750 |
| 103 | Գեներատորի վերանորոգում | 6250 |
| 104 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 6250 |
| 105 | Մեկնարկիչի վերանորոգում | 6250 |
| 106 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 6250 |
| 107 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 2500 |
| 108 | Բռնկման կոճղակի հանում և տեղադրում | 6250 |
| 109 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | 56250 |
| 110 | Ազդանշանի հանում և տեղադրում | 1250 |
| 111 | Ապակեմաքրիչի շարժիչի հանում և տեղադրում | 7500 |
| 112 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | 12500 |
| 113 | Ազդանշանային համակարգի տեղադրում | 18750 |
| 114 | Մագնիտոլայի տեղադրում | 12500 |
| 115 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 1900 |
| 116 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 25000 |
| 117 | Էլ/հաղորդալարերի հիմնական խուրձի հանում և տեղադրում | 37500 |
| 118 | Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրձի հանում և տեղադրում | 31250 |
| 119 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 2500 |
| 120 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 2500 |
| 121 | Վառոցքի մոմերի փոխարինում | 1900 |
| 122 | Կոնդիցիոների լիցքավորում | 18750 |
| | *Այլ ծառայություններ* | |
| 123 | Ավտոմեքենայի լվացում | 3750 |
| 124 | Անիվի հանում և տեղադրում | 625 |
| 125 | Անվադողի վերանորոգում | 1250 |
| 126 | Անիվի բալանսավորում | 1250 |
| 127 | CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ - ի համար* | 1250 |
| 128 | Խառատային աշխատանքներ | 3750 |
| 129 | Փականագործի աշխատանքներ | 1250 |
| 130 | Քարշակի ծառայություն գին *1կմ, համար* | 625 |
| | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | |